ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՄԱՍԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

370801, ք. Մասիս, Հերացու 28

e-mail՝ info@masismc.am
0236-4-30-00

«26» «հունիսի» 2026թ.

016/ 144

«ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Արսեն Մկրտչյանին

Հարգելի՛ պարոն Մկրտչյան,

«Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, (այսուհետ՝ Գնորդ կամ Պատվիրատու) և «ԱՐՍԾԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/31-1» ծածկագրով 14.05.2026 թվականին կնքված պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: (....):

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7 ենթակետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանգրի 2-րդ կետի 2.1.7.1 ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

Արձանագրում ենք, որ Պատվիրատուի՝ masismctender@gmail.com էլեկտրոնային փոստից Վաճառողի՝ նախապես ֆիքսված էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեին՝ vidtardan@gmail.com, 18.06.2026 թվականին, ժամը 10:54-ին ուղարկվել է 1 հատ «Կոնք-ազդրային հոդի ցեմենտային երկբեւեռ էնդոպրոթեզ 51մմ» և 1 հատ «ոսկրային ցեմենտ» ապրանքների մատակարարման գրավոր պահանջ (պատվեր), իսկ մատակարարման ժամկետ է սահմանվել 1 աշխատանքային օրը՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.4.2-րդ ենթակետի դրույթները: Մինչդեռ, Վաճառողը սահմանված 1 աշխատանքային օրվա ընթացքում չի իրականացրել պահանջված ապրանքների մատակարարումը, ինչով խախտել է իր պայմանագրային պարտավորությունը:

Ավելին, ապրանքների մատակարարման ժամկետի ավարտի օրվանից անցել է 5 օրից ավել ժամանակ, և Վաճառողը 25.06.2026 թվականի դրությամբ չի իրականացրել պահանջված ապրանքների մատակարարումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 25.06.2026 թվականի դրությամբ Վաճառողը չի իրականացրել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված և Պատվիրատուի 18.06.2026 թվականի գրավոր պահանջում նշված ապրանքի մատակարարումը՝ արձանագրենք, որ Վաճառողի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական խախտում, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, ինչը Պայմանագրի 2.1.7 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հիմք է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար, ուստի հայտնում ենք, որ «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 26.06.2026 թվականին միակողմանի լրիվ լուծում է Պայմանագիրը:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում ՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կհրապարակվի www.procurement.am կայքի համապատասխան բաժնում ՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Տնօրեն՝ **Ա. Աղաջանյան**